Ն Ա Խ Ա Գ Ի Ծ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ը

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԵՑԵՐՈՐԴ ԳՈՒՄԱՐՄԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՄՇՏԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎՆԵՐԻ ՍՏԵՂԾՄԱՆ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Ազգային ժողովի կանոնակարգ» Հայաստանի Հանրապետության 2016 թվականի դեկտեմբերի 16-ի ՀՕ-9-Ն սահմանադրական օրենքի 112-րդ հոդվածի 1-ին, 4-րդ և 5-րդ մասերը՝ Հայաստանի Հանրապետության վեցերորդ գումարման Ազգային ժողովը (այսուհետ՝ Ազգային ժողով)

Ո Ր Ո Շ Ե Յ

1. Սահմանել Ազգային ժողովի 10 մշտական հանձնաժողովներ՝ սույն որոշման Հավելվածում նշված անվանումներով, գործունեության ոլորտներով, անդամների թվով, նախնական քննարկմանը վերապահված առանձին օրենքների անվանումներով, պաշտոնում ընտրության կամ նշանակման համար Ազգային ժողովին թեկնածուներ առաջարկելու իրավասությամբ և խորհրդարանական վերահսկողության շրջանակով.
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Ազգային ժողովի կողմից ընդունման պահից.
3. Սույն որոշման ուժի մեջ մտնելու պահից ուժը կորցրած է ճանաչել «Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի հինգերորդ գումարման մշտական հանձնաժողովների թիվը, անվանումները և գործունեության ոլորտները սահմանելու մասին» Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի 2012 թվականի մայիսի 31-ի ԱԺՈ-004-Ն որոշումը։

Հավելված

	Ազգային ժողովի մշտական հանձնաժողովի անվանումը	*Գործունեության ոլորտը*	*Անդամների ընդհանուր թիվը*	*Նախնական քննարկմանը վերապահված առանձին օրենքների անվանումները*	*Պաշտոնում ընտրության կամ նշանակման համար Ազգային ժողովին թեկնածուներ առաջարկելու իրավասությունը*	*Խորհրդարանական վերահսկողություն շրջանակը*
1)	**Առողջապահության, մայրության, մանկության և սոցիալական հարցերի մշտական հանձնաժողով**	առողջապահություն, մայրություն և մանկություն, սոցիալական ապահովություն, հաշմանդամության հիմնահարցեր, աշխատանք, զբաղվածություն, բնակարանային պայմաններ, ժողովրդագրություն և հայրենադարձություն	10	Բնակչության բժշկական օգնության և սպասարկման մասին օրենսդրություն, Պետական կենսաթոշակների մասին օրենքը, Պետական նպաստների մասին օրենքը, Հաշմանդամների սոցիալական պաշտպանության մասին օրենքը, Զինծառայողների և		Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն, աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն

				նրանց ընտանիքների անդամների սոցիալական ապահովության մասին օրենքը և հարակից օրենսդրական ակտերը		
2)	**Արտաքին հարաբերություն ների մշտական հանձնաժողով**	միջազգային պայմանագրեր, միջազգային հարաբերություններ և միջխորհրդարանակ ան կապեր, խորհրդարանական դիվանագիտություն	10	Ազգային ժողովի կողմից վավերացման ենթակա միջազգային իրավական ակտերը՝ բացառությամբ Եվրոպական ինտեգրման մասով		Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարարություն և միջազգային տնտեսական ինտեգրման և բարեփոխումների նախարարություն՝ բացառությամբ Եվրոպական ինտեգրման հարցերի, սփյուռքի նախարարություն

3)	**Գիտության, կրթության, մշակույթի, երիտասարդության և սպորտի հարցերի մշտական հանձնաժողով**	գիտություն, կրթություն, հրատարակչական գործ, մշակույթ, սփյուռքի հետ կապեր, մամուլ, ռադիո, հեռուստատեսություն, համացանց, երիտասարդություն, սպորտ	9	հանրակրթության, գիտական և գիտատեխիկական գործունեության, նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության, բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության, մշակութային արժեքների պահպանության, ներմուծման, արտահանման, մշակույթի ոլորտում գործունեության, ֆիզիկական կուլտուրայի և սպարտի, մանկապատանեկա		Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարություն, մշակույթի նախարարություն, սպորտի և երիտասարդության հարցերի նախարարություն

				ն սպորտի մասին օրենսդրությունը և հարակից օրենսդրական ակտերը		
4)	**Գյուղատնտեսական, բնապահպանական, տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման հարցերի մշտական հանձնաժողով**	գյուղատնտեսություն, ջրային պաշարներ, բնության պահպանություն, տարածքային կառավարում, տեղական ինքնակառավարում, տարածքային զարգացում, համայնքային ծառայություն, տեղական հարկեր, տուրքեր և վճարներ	9	գյուղատնտեսական, բնապահպանական (բացառությամբ բնօգտագործման և այլ վճարների) օրենսդրությունը, գործադիր և կառավարությանն առընթեր մարմինների կողմից տեղերում իրականացվող կառավարման վերաբերյալ օրենսդրությունը, տեղական ինքնակառավարմասին մասին օրենքը, Երևան քաղաքում		Հայաստանի Հանրապետության բնապահպանության նախարարություն, գյուղատնտեսության նախարարություն, տարածքային կառավարման և զարգացման նախարարություն, քաղաքաշինության պետական կոմիտե, անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտե

				տեղական ինքնակառավարման մասին օրենքը, հողային, անտառային, ջրային օրենսգրքերը և հարակից օրենսդրական ակտերը		
5)	**Եվրոպական ինտեգրման հարցերի մշտական հանձնաժողով**	Եվրոպական Միության և Եվրախորհրդի հետ կապեր, Հայաստանի Հանրապետության օրենքների և եվրոպական օրենսդրության ներդաշնակեցում	9	այն բոլոր միջազգային պայմանագրերը, որոնք առնչվում են եվրոպական ինտեգրացիայի պրոցեսին, ինչպես նաև ցանկացած նախագիծ, որով ներպետական օրենսդրությունը համաձայնեցվում է Եվրոպական միության պահանջներին		Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարարություն, միջազգային տնտեսական ինտեգրման և բարեփոխումների նախարարություն՝ Եվրոպական ինտեգրման հարցերի մասով

6)	**Մարդու իրավունքների պաշտպանության և հանրային հարցերի մշտական հանձնաժողով**	Մարդու և քաղաքացու իրավունքներ և ազատություններ, փաստաբանական և նոտարական ծառայություններ, երեխայի իրավունքներ, կուսակցություններ և այլ հասարակական միավորումներ, կրոն, գենդերային հարցեր, ազգային փոքրամասնություններ, տեղեկատվական ազատություն	10	Մարդու իրավունքներրի պաշտպանի մասին օրենքը, ընտանեկան օրենսգիրքը, աշխատանքային օրենսգիրքը, Երեխայի իրավունքների մասին օրենքը, Փաստաբանության մասին օրենքը, Կուսակցությունների մասին օրենքը, Նոտարիատի մասին օրենքը, Հասարակական կազմակերպությունների մասին օրենքը, Կանանց և տղամարդկանց հավասար իրավունքների և հավասար հնարավորությունն	Հայաստանի Հանրապետության Մարդու իրավունքների պաշտպանի, Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովի անդամների պաշտոններում ընտրելու համար Ազգային ժողովին թեկնածուի առաջարկում	Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն, ազգային անվտանգության ծառայություն, ոստիկանություն, պաշտպանության նախարարություն, պետական և տեղական ինքնակառավարման մարմիններ՝ Մարդու և քաղաքացու հիմնարար իրավունքների պաշտպանության մասով

				երի ապահովման մասին օրենքը, Խղճի ազատության եվ կրոնական կազմակերպությունների մասին օրենքը, փոքրամասնությունների իրավունքներին, ինչպես նաև ԶԼՄ-ներին վերաբերող օրենսդրությունը և հարակից օրենսդրական ակտերը		
7)	**Պաշտպանության, ազգային անվտանգության և ներքին գործերի մշտական հանձնաժողով**	պաշտպանություն, անվտանգություն, արտակարգ իրավիճակներ, ոստիկանություն, ռազմարդյունաբերական համալիր, ռազմական ուսումնական	10	Հայաստանի Հանրապետության Զինված ուժերի կանոնագրքերը հաստատելու մասին օրենքները, Զինվորական ծառայություն անցնելու մասին		Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարություն, պաշտպանության նախարարություն, ազգային անվտանգության

		հաստատություններ, զինվորական և ոստիկանական ծառայություններ		օրենքը, Ոստիկանության մասին, Ոստիկանության զորքերի մասին օրենքները, Արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության մասին օրենքը, Հայաստանի Հանրապետության ներքին և արտաքին անվտանգության ապահովման վերաբերյալ այլ օրենսդրական ակտերը		ծառայություն, միջուկային անվտանգության կարգավորման պետական կոմիտե, ոստիկանություն, քաղաքացիական ավիացիայի գլխավոր վարչություն
8)	**Պետական-իրավական հարցերի մշտական հանձնաժողով**	սահմանադրական փոփոխություններ, ընտրական համակարգ, հանրային ծառայություն,	10	կառավարության կառուցվածքի մասին օրենքը, Ազգային ժողովի կանոնակարգ օրենքը, դատական,	Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի, Կենտրոնական ընտրական	Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն՝ բացառությամբ Մարդու իրավունքների

	դատարանակազմություն, արդարադատություն, դատախազություն, քաղաքացիական, քրեական, վարչական օրենսդրություն, Ազգային ժողովի կանոնակարգ		վարչական իրավախախտումների վերաբերյալ, վարչական դատավարության, քրեական, քրեական դատավարության, քրեակատարողական, քաղաքացիական, քաղաքացիական դատավարության, ընտրական օրենսգրքերը, պետական տուրքի մասին օրենքը, վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին օրենքը և հարակից օրենսդրական ակտերը	հանձնաժողովի նախագահի և մյուս անդամների պաշտոններում ընտրելու համար Ազգային ժողովին թեկնածուի առաջարկում	պաշտպանության և հանրային հարցերի մշտական հանձնաժողովի իրավասությանը վերապահված խորհրդարանական վերահսկողության շրջանակի

9)	**Տնտեսական հարցերի մշտական հանձնաժողով**	արդյունաբերություն, քաղաքաշինություն, էներգետիկա, բնական պաշարներ՝ բացառությամբ ջրային պաշարների, տրանսպորտ, կապ, հեռահաղորդակցություն, արտադրական ենթակառուցվածքի այլ ճյուղեր, զբոսաշրջություն, առևտուր և ծառայություններ, ձեռնարկատիրական գործունեություն, պետական գույքի կառավարում	10	Ընդերքի մասին օրենսգիրքը, Տնտեսական մրցակցության պաշտպանության մասին օրենքը, Լիցենզավորման մասին օրենքը, Սնանկության մասին օրենքը, Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին օրենքը, Տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտի պետական աջակցության մասին օրենքը և հարակից օրենսդրական ակտերը		Հայաստանի Հանրապետության էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարություն, տնտեսական զարգացման և ներդրումների նախարարություն, պետական գույքի կառավարման վարչություն

10)	**Ֆինանսավարկային և բյուջետային հարցերի մշտական հանձնաժողով**	բյուջետային օրենսդրություն, պետական բյուջե, փոխառություններ, վարկեր, դրամ, դրամաշրջանառություն, բանկային համակարգ, ֆինանսական (այդ թվում՝ դրամական, կապիտալի, վարկային, ապահովագրական և արժեթղթերի) շուկաներ Ազգային ժողովի բյուջետային գրասենյակի գործունեության ընդհանուր համակարգում և մշտադիտարկում	10	մաքսային օրենսդրություն, հարկային օրենսդրություն, այլ պարտադիր վճարների մասին մասին օրենքները, Պետական բյուջեի մասին օրենքը, ֆինանսաբանկային օրենսրությունը, ապահովագրական օրենսդրությունը, արժեթղթերի շուկային մասին օրենսդրությունը, կուտակային կենսաթոշակների մասին և հարակից օրենսդրական ակտերը	Հայաստանի Հանրապետության Հաշվեքննիչ պալատի նախագահի և մյուս անդամների, Կենտրոնական բանկի նախագահի, նրա տեղակալների և խորհրդի մյուս անդամների պաշտոններում ընտրելու համար Ազգային ժողովին թեկնածուի առաջարկում	Հայաստանի Հանրապետության ֆինսնաների նախարարություն, պետական եկամուտների կոմիտե

Հ Ի Մ Ն Ա Վ Ո Ր Ու Մ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԵՑԵՐՈՐԴ ԳՈՒՄԱՐՄԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՄՇՏԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎՆԵՐԻ ՍՏԵՂԾՄԱՆ ՄԱՍԻՆ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ

Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 106-րդ հոդվածի 1-ին մասի ուժով՝ ***Ազգային ժողովն օրենքների նախագծերի, իր իրավասության մեջ մտնող այլ հարցերի նախնական քննարկման և դրանց վերաբերյալ Ազգային ժողով եզրակացություններ ներկայացնելու, ինչպես նաև խորհրդարանական վերահսկողություն իրականացնելու համար ստեղծում է մշտական հանձնաժողովներ: Ազգային ժողովում կարող է ստեղծվել ոչ ավելի, քան 12 մշտական հանձնաժողով:*** Նախորդ գումարման խորհրդարանն ուներ 131 պատգամավոր և 12 մշտական հանձնաժողով: Նոր կազմավորվող Ազգային ժողովն ունի 105 պատգամավոր, ընդ որում՝ համաձայն «Ազգային ժողովի կանոնակարգ» Հայաստանի Հանրապետության 2016 թվականի դեկտեմբերի 16-ի ՀՕ-9-Ն սահմանադրական օրենքի (այսուհետ՝ Կանոնակարգ) 11-րդ հոդվածի 7-րդ մասի՝ ***Ազգային ժողովի նախագահը և նրա տեղակալները, ինչպես նաև խմբակցությունների ղեկավարները կարող են չընդգրկվել հանձնաժողովի կազմում:*** Հաշվի առնելով այն հանգամանքը, որ Ազգային ժողովի նախագահն ունի 3 տեղակալ (Կանոնակարգի 6-րդ հոդվածի 1-ին մաս) և որ վեցերորդ գումարման Ազգային ժողովում կազմավորվում են 4 խմբակցություններ, հանձնաժողովներին ամենայն հավանականությամբ անդամակցելու են 105 պատգամավորներից 97-ը: Ըստ այդմ՝ առաջարկվում է պատգամավորների թվի նվազեցմանը համամասնորեն կրճատել նաև մշտական հանձնաժողովների թիվը՝ այն հասցնելով 10-ի:

Հանձնաժողովների թվի կրճատման թերևս օբյեկտիվ հիմք կլիներ նախորդ գումարման Ազգային ժողովի թվով ամենաքիչ նախագծերով գլխադասային ճանաչված հանձնաժողովների կրճատումը կամ միացումն այլ հանձնաժողովների, սակայն հատկանշական է, որ այդ հանձնաժողովներն են Մարդու իրավունքների պաշտպանության և հանրային հարցերի մշտական հանձնաժողովը, ինչպես նաև Եվրոպական ինտեգրման հարցերի մշտական հանձնաժողովը: Ակնհայտ է, որ Մարդու իրավունքների պաշտպանության և հանրային հարցերի մշտական հանձնաժողովը չէր կարող այդքան նվազ թվով նախագծերով գլխադասային լինել, քանի որ համապատասխան ոլորտներում եղել են բազմաթիվ նախագծեր: Այսինքն, հինգերորդ գումարման Ազգային ժողովի ղեկավարությունը ստորադասել է այս հանձնաժողովը՝ չափազանց քիչ

նախագծեր մակագրելով: Ընդ որում, ակնհայտ է, որ այս հանձնաժողովն իր հերթին ինքը բավարար աշխատանք չի կատարել՝ շտկելու համար նախագծերի մակագրման այս դիսբալանսը հիմնականում Պետական-իրավական մշտական հանձնաժողովի հետ: Միաժամանակ հարկ է ընդգծել, որ հինգերորդ գումարման Ազգային ժողովի Պետական-իրավական հարցերի մշտական հանձնաժողովն աշխատել է գերբեռնվածության պայմաններում՝ ստանալով Ազգային ժողով մուտք լինող նախագծերի մեծ տոկոսը՝ որպես գլխադասային հանձնաժողով: Ընդ որում, այդ նախագծերից շատերը եղել են ծավալուն մայր օրենքներ, օրենսգրքեր և այլն:

Ավելին, Մարդու իրավունքների նեղ ոլորտային հանձնաժողովի փակումը կլինի պետական մակարդակով հետքայլ՝ Մարդու իրավունքների պաշտպանության առումով և դա շատ վատ ուղերձ է թե՛ Հայաստանի Հանրապետության քաղաքացիներին և թե՛ մեր միջազգային գործընկերներին՝ այն առումով, որ խորհրդարանական կառավարման Հայաստանում փակվում է Մարդու իրավունքների և հանրային հարցերի մշտական հանձնաժողովը կամ կլանվում է այլ հանձնաժողովի կողմից:

Մյուս կողմից, Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի մայիսի 04-ի նիստում հաստատվել է Մարդու իրավունքների պաշտպանության ազգային ռազմավարությունից բխող 2017-2019 թվականների գործողությունների ծրագիրը՝ համաձայն նույն որոշման Հավելված 1-ի: Մասնավորապես, ծրագրով նախատեսվող գործողություններն են.

1) Ընդունել «Բժշկական հաշտարարի համակարգի գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի հայեցակարգ
2) Առաջադեմ փորձի հիման վրա տեղայնացնել և ներդնել կլինիկական ուղեցույցները
3) Առաջադեմ փորձի հիման վրա պացիենտի վարման գործելակարգերի տեղայնացում և ներդրում
4) Ներդնել էլ-առողջապահության տեղեկատվական համակարգ
5) Ապահովել բոլոր ՀՀ առողջապահական հաստատություններում մահացության դեպքերի վերաբերյալ ըստ հատկանիշների (օր.՝ մահվան պատճառ, հիվանդություն, տարիք, սեռ, հաշմանդամության տեսակ և այլն) (առկայության դեպքում) վարվող վիճակագրության հրապարակայնությունը
6) Վերանայել բժշկական նպատակներով թմրամիջոցների և հոգեմետ (հոգեներգործուն) նյութերի օգտագործման կարգը և պայմանները սահմանող իրավական ակտերը

7) Կատարելագործել բժշկական գաղտնիքի մշակման և տարածման, ինչպես նաև բժշկական գաղտնիքի խախտման համար պատասխանատվություն սահմանող կարգավորումները

8) Ձևավորել հասարակական դիտորդական խումբ ՀՀ-ում հոգեկան առողջության ոլորտում բժշկական և խնամքի ծառայություններ տրամադրող կազմակերպություններում ծառայությունների որակի և Մարդու իրավունքների պաշտպանության վիճակի նկատմամբ հասարակական վերահսկողության ապահովման նպատակով

9) Մշակել խոշտանգումների և այլ դաժան, անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի փաստաթղթավորման օրինակելի նմուշի ձևաթղթեր՝ խոշտանգումների և այլ դաժան, անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի մասով արդյունավետ քննության իրականացման և փաստաթղթավորման մասին ձեռնարկի (Ստամբուլի արձանագրություն) չափանիշներին համապատասխան

10) Ենթադրյալ խոշտանգման ենթարկված անձի արդարացի փոխհատուցման ինստիտուտի անշեղ կիրառումն ապահովելու համար կատարել ուսումնասիրություններ և ներկայացնել առաջարկություններ բացահայտված թերությունների վերացման ուղղությամբ

11) Իրավապահ մարմինների աշխատակիցների և փաստաբանների համար իրականացնել վերապատրաստումներ խոշտանգումների և այլ դաժան վերաբերմունքի արգելքի վերաբերյալ

12) Կատարել ուսումնասիրություններ խոշտանգումների և այլ դաժան, անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի վերաբերյալ հաղորդումը անմիջապես ընդդատյա մարմնին հանձնելու կառուցակարգերում հնարավոր թերությունների և հակասությունների վեր հանման ուղղությամբ

13) Ոստիկանության ծառայողների համար կազմակերպել շարունակական վերապատրաստումներ հավաքների ժամանակ «Հավաքների ազատության մասին» ՀՀ օրենքի, միջազգային լավագույն փորձի պատշաճ կիրառման վերաբերյալ

14) Վերանայել և բարեփոխել ցմահ ազատազրկման ձևով պատիժը կրող անձանց ուղղիչ հիմնարկի տեսակը փոխելու օրենսդրությամբ սահմանված ժամկետը, նոր հանցագործության կատարման հիմքով այդ ժամկետի վերահաշվարկի իրավական կարգավորումները՝ նախատեսելով մեկուսացվածության առավել ցածր աստիճան ունեցող ուղղիչ հիմնարկ տեղափոխվելու ճկուն մեխանիզմ: Վերանայել ցմահ ազատազրկման դատապարտված անձանց որոշակի ժամկետով դատապարտված անձանցից անջատ պահելու կանոնը

15) Կատարել ուսումնասիրություն՝ ազատությունից զրկված անձանց՝ ընտանիքի անդամների և հարազատների հետ հաղորդակցվելու նպատակով կապի այլընտրանքային միջոցներից (տեսազանգ) օգտվելու հնարավորության վերաբերյալ՝ հաշվի առնելով անվտանգության ապահովման պահանջները

16) Բարեփոխել ծանր հիվանդության հիմքով ազատազրկման ձևով պատիժը կրող դատապարտյալին պատժից, իսկ կալանավորված անձին՝ կալանքից ազատելու իրավական կարգավորումները, ինչպես նաև սահմանել գործող բժշկական փորձաքննություն իրականացնող մարմինների գործունեության իրավական ընթացակարգեր և այդ հիմքով կալանքից և պատիժի մնացած մասը կրելուց ազատելու դատավարական հստակ մեխանիզմներ

17) Վերանայել ազատությունից զրկված անձանց՝ արտաքին աշխարհի հետ հաղորդակցվելու իրավունքի իրացման եղանակները, մասնավորապես, կալանավորված անձանց և դատապարտյալների բջջային հեռախոսից օգտվելու թույլտվության հնարավորության հարցը

18) Կատարել ուսումնասիրություն կալանավորված անձանց և դատապարտյալների (հատկապես օտարերկրյացիների)՝
կապի այլընտրանքային միջոցներով արտաքին աշխարհի հետ շփվելու հնարավորության վերաբերյալ

19) Քրեակատարողական ծառայողների գործողությունների, անգործության կամ նրանց կողմից ընդունած ակտերի բողոքարկման մեխանիզմների նախատեսում՝ ընդդատյա դատարանի, բողոքներին ներկայացվող պահանջների, բողոքարկման ժամկետների հստակ ամրագրմամբ

20) Կատարել ուսումնասիրություն քրեակատարողական հիմնարկներում հաշմանդամություն ունեցող անձանց համար մատչելի միջավայր ապահովելու առաջնահերթությունների վերաբերյալ և արդյունքներով մշակվել է համապատասխան գործողությունների ծրագիր

21) Մշակել «Քրեական գործերով իրավական փոխօգնության մասին» ՀՀ օրենքի նախագիծ

22) Մշակել փոփոխություններ և լրացումներ «Տեղական հանրաքվեի մասին» ՀՀ օրենքում

23) Դպրոցական ուսումնական ծրագրերում ներառել ՀՀ ընտրական իրավունքի վերաբերյալ թեմաներ

24) Իրականացնել հաշմանդամություն ունեցող (այդ թվում՝ սայլակ օգտագործող, լսողության և տեսողության խնդիրներ ունեցող) քաղաքացիների ընտրական իրավունքի իրացման համապարփակ գնահատում և միջոցներ ձեռնարկել նրանց ընտրական իրավունքի լիակատար իրացման ուղղությամբ

25) Մշակել «Կրոնական կազմակերպությունների մասին» նոր օրենքի նախագիծ

26) Կատարել ուսումնասիրություն ԵԽ նախարարների կոմիտեի 1997թ. և ԵԽ Խորհրդարանական վեհաժողովի 2007թ. առաջարկություններին համապատասխան ատելության խոսքի քրեականացման հնարավոր մոդելների ներդրման նպատակահարմարության վերաբերյալ

27) Վերանայել էրոտիկ բնույթի հեռուստառադիոհաղորդումների, սարսափ ու ակնհայտ բռնություն պարունակող ֆիլմերի, ինչպես նաև անչափահասների առողջության, մտավոր, ֆիզիկական զարգացման, դաստիարակության վրա հնարավոր բացասական ազդեցություն ունեցող հաղորդումների բովանդակության գնահատման չափորոշիչները

28) Մշակել մեխանիզմներ զորակոչիկներին իրենց բժշկական զննության եզրակացության ակտի պարտադիր տրամադրման համար

29) Սահմանել առողջական խնդիրների հիմքով վաղաժամկետ զորացրված անձանց փաստաթղթերի տրամադրման ողջամիտ ժամկետ

30) «Մարդու իրավունքները զինված ուժերում» առարկան ներառել ռազմաուսումնական հաստատությունների ուսումնական ծրագրերում, ինչպես նաև ապահովել հեռուսուցման նպատակով ՀՀ ՊՆ պաշտոնական կայքէջում դրա հասանելիությունը

31) Ապահովել զորակոչիկներին իրենց իրավունքների և դրանց պաշտպանության մասին տեղեկացնելու մեխանիզմներ՝ մշակելով ծանուցագրի հետ միաժամանակ զորակոչիկներին զորակոչից տարկետման, զինծառայությունից ազատման, բնակավայրին մոտ ծառայելու և այլ իրավունքները պարզաբանող հուշաթերթի տրամադրման կարգ

32) Ստեղծել մեխանիզմներ կայազորային մեկուսարաններում մշտադիտարկում իրականացնող դիտորդական խմբի գործունեության համար՝ հաշվի առնելով ՀՀ օրենսդրության պահանջները և միջազգային լավագույն փորձը

33) Հստակեցնել առանձին հիվանդությունների բնութագրերը/
հատկանիշները, որոնց առկայության դեպքում զինապարտը կարող է ձեռք բերել տարկետում

34) Ապահովել զորակոչիկի, զինծառայողի և նրանց հավասարեցված անձանց վերաբերյալ ընդունվող յուրաքանչյուր իրավական ակտի (տույժի և այլնի) վերաբերյալ պարտադիր ծանուցումը և օրինակի տրամադրումը զինծառայողին կամ նրա ընտանիքի անդամներին, ինչպես նաև մշակել դրանց բողոքարկման մեխանիզմներին ծանոթացնելու համակարգ

35) Համալիր սոցիալական ծառայությունների տարածքային կենտրոնների միջոցով, պետության կողմից տրամադրվող միջոցների որոշակի գումարի սահմաններում, ընտանիքների անապահովության գնահատման համակարգի հիման վրա իրականացվող սոցիալական աջակցության ծրագրերից դուրս մնացած կարիքավոր ընտանիքների համար ներդնել սոցիալական աջակցության կենսապահովման ծրագրային փաթեթ

36) Ներդնել սոցիալական պաշտպանության ոլորտում մատուցվող ծառայությունների և ծրագրերի մշտադիտարկման և արդյունավետության գնահատման արդյունավետ համակարգ

37) Մշակել և ներդնել ՔԿԱԳ մարմինների հետ ծննդյան և այլ ակտերի վերաբերյալ տեղեկատվության փոխանակության համակարգ

38) Բնակչության սոցիալական պայմանների բարելավման նպատակով՝ ներդնել սոցիալական պաշտպանության ոլորտի միասնական տեղեկատվական համակարգ՝ (էլեկտրոնային սոցիալական ծառայությունների տեղեկատվական համակարգ) հաշվի առնելով անձնական տվյալների պաշտպանության մասին ՀՀ օրենսդրության պահանջները

39) Մշակել բազմազավակ ընտանիքներին տրամադրվող սոցիալական երաշխիքներն ամրագրող հիմնարար իրավական ակտ

40) Ուսումնասիրել աշխատանքային հարաբերություններում աշխատողների իրավունքների պաշտպանության արտադատական ազգային մեխանիզմի ներդրման հնարավորության հարցը

41) Կատարելագործել ընտանիքի անապահովության գնահատման մեթոդաբանությունը, մշակել ընտանիքի անապահովության գնահատման օբյեկտիվ և համակողմանի չափորոշիչներ

42) Հստակեցնել երկրաշարժի հետևանքով անօթևան մնացած ընտանիքների բնակարանային խնդիրների լուծման նպատակով բնակարանային պայմանները բարելավելու իրավունք ունեցող ընտանիքներին տրամադրվող պետական աջակցության մոտեցումները և աջակցության տրամադրման գործընթացի հետ կապված հարցերը

43) Իրականացնել վերապատրաստում անչափահասների գործերով արդարադատության ոլորտում ներգրավված պաշտոնատար անձանց համար

44) Բարելավել մինչև երկու տարեկան երեխայի խնամքի տրամադրման, ինչպես նաև երրորդ և յուրաքանչյուր հաջորդ երեխայի ծննդյան միանվագ պետական նպաստների վարչարարությունը

45) Կատարել ուսումնասիրություն՝ ծնողին կամ կերակրողին արգելանքի վերցնելու կամ քրեական վարույթն

իրականացնող մարմնի այլ գործողությունների հետևանքով առանց հսկողության, խնամքի և գոյատևման միջոցների մնացած անչափահասներին և անաշխատունակ անձանց պետական բյուջեի միջոցների հաշվին հսկողությամբ, խնամքի և գոյատևման միջոցներով ապահովելու գործող համակարգի արդյունավետության բարձրացման վերաբերյալ

46) Մշակել և ներդնել պարտադիր ուսուցումից դուրս մնացած երեխաների բացահայտման և ուղղորդման մեխանիզմներ

47) Երեխաների պաշտպանվածության ապահովման համար մշակել երեխաների և ծնողների համար համացանցից օգտվելու ուղեցույցներ

48) Երաշխավորել որակյալ 12-ամյա միջնակարգ կրթության համընդհանուր մատչելիությունը, այդ թվում՝ հոսքային ուսուցման համընդհանուր հասանելիությունն ու մատչելիությունը, բոլոր երեխաների համար՝ անկախ նրանց բնակվելու վայրից, սեռից, սոցիալական կարգավիճակից, հաշմանդամությունից, կրոնից և այլ առանձնահատկություններից

49) Մշակել միջին բեռնվածության և թերբեռնված դպրոցների ֆինանսավորման նոր մեխանիզմ

50) Մշակել պետական հանրակրթական ուսումնական հաստատությունների մանկավարժական աշխատողների էթիկայի կանոններ՝ հաշվի առնելով Տոլեդոյի սկզբունքները

51) Օրենսդրությամբ ամրագրել հանրակրթական ուսումնական հաստատությունների կառավարման մարմինների կազմում շահերի բախումը բացառող դրույթներ

52) Երաշխավորել գիտական անկախությունը, անաչառությունը, անկախ հետազոտական մտքի զարգացումն ու գիտական հետազոտական համակարգերի անկողմնակալությունը՝ բարձրագույն կրթության համակարգում

53) Կատարել ուսումնասիրություններ հուշարձանների տեղափոխման վերջին հինգ տարիների պրակտիկայի վերաբերյալ՝ վեր հանելով խնդիրները և ներկայացնելով լուծման առաջարկներ

54) Կատարել օրենսդրական փոփոխություններ՝ սահմանելով հանրային գերակա շահ ճանաչված սեփականության նկարագրության արձանագրության բողոքարկման ողջամիտ ժամկետ

55) Մշակել «Մթնոլորտային օդի պահպանության մասին» ՀՀ նոր օրենքի նախագիծ

56) Մշակել փոփոխություններ և լրացումներ «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» օրենքում

57) Շրջակա միջավայրի օրենսդրությունը և ոլորտի քաղաքականությունը համապատասխանեցնել Օրհուսի կոնվենցիայի համապատասխանության կոմիտեի՝ Հայաստանի վերաբերյալ կայացրած որոշումներին, մասնավորապես՝ շրջակա միջավայրի վերաբերյալ տեղեկատվության ազատության, որոշումների ընդունմանը հանրության արդյունավետ մասնակցության և դատական մատչելիության հարցերում

58) Գործատուին տրամադրել պետական աջակցություն զբաղվածության կարգավորման պետական ծրագրերով աշխատաշուկայում անմրցունակ և հաշմանդամություն ունեցող անձանց աշխատանքի տեղավորման դեպքում

59) Ապահովել հաշմանդամություն ունեցող անձանց համար հնարավորություններ՝ ֆիզիկական կուլտուրայի և սպորտի ոլորտում

60) Բարելավել բժշկասոցիալական փորձաքննության գործընթացը՝ նոր համակարգի ձևավորմամբ, որը կապահովի հաշմանդամության հստակ սահմանում՝ հիվանդությունը հաշմանդամությունից տարանջատող չափորոշիչների առկայությամբ

61) Վերանայել «Արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության մասին» ՀՀ օրենքը և անհրաժեշտ փոփոխություններ առաջարկել հաշմանդամություն ունեցող անձանց վտանգավոր և արտակարգ իրավիճակներում պատշաճ հումանիտար աջակցություն ցուցաբերելու համար

62) Ստեղծել իրավական հիմքեր հանրային կիրառության հասարակական շենք-շինություններում, հանգստի գոտիներում հաշմանդամություն ունեցող անձանց հաշմանդամների տեղաշարժման մատչելիությունն ապահովելու նպատակով

63) Մշակել հաշմանդամություն ունեցող անձանց հետ աշխատող տարբեր մասնագիտացումներով համապատասխան մասնագետներ պատրաստելու ծրագիր

64) Ընդլայնել հաշմանդամություն ունեցող երեխաներին և նրանց ընտանիքներին սոցիալ-վերականգնողական ծառայություններ տրամադրող համայնքային կենտրոնների ցանկը

65) Ներդնել հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձանց խնամքի և սոցիալական սպասարկման ծառայությունների տրամադրման այլընտրանքային մոդելներ

66) ՀՀ-ում տարեցների սոցիալական պաշտպանության համակարգի բարեփոխման շրջանակներում սահմանել տարեցներին և հաշմանդամություն ունեցող անձանց մատուցվող խնամքի և սոցիալական ծառայությունների նոր մոդելներ, ինչպես նաև խնամքի ծառայությունների՝ վճարովի և համավճարի սկզբունքով մատուցման

մեխանիզմներ

67) Մշակել ՀՀ-ում կանանց և տղամարդկանց հավասար իրավունքների և հավասար հնարավորությունների ապահովման քաղաքականության 2017-2021 թվականների ռազմավարական ծրագիր

68) Կանանց և տղամարդկանց հավասար իրավունքների և հավասար հնարավորությունների մշտադիտարկման և գնահատման մեխանիզմի ներդրում/կարգ

69) Քայլեր ձեռնարկել պտղի սեռով պայմանավորված՝ հղիության արհեստական ընդհատումների կանխարգելմանն ուղղված արդյունավետ պայքարի համար

70) Փոփոխություններ կատարել «Մարդկանց թրաֆիքինգի և շահագործման ենթարկված անձանց նույնացման և աջակցության մասին» ՀՀ օրենքի կիրարկումն ապահովող իրավական ակտերում

71) Մշակել ընտանեկան բռնության ենթարկված անձանց ուղղորդման մեխանիզմ

72) Սահմանել ընտանեկան բռնության ենթարկված անձանց տրամադրվող համալիր ծառայությունների տրամադրման և գնահատման չափանիշներ, այդ ծառայությունների բովանդակության, ծավալի, պայմանների, որակի և անվտանգության վերաբերյալ պահանջների նկատմամբ միասնական մոտեցման ապահովման համար

73) Հայաստանում պետության կողմից ֆինանսավորվող աջակցության կենտրոնների հիմնում.

ա) Հայաստանի 3 մարզերում և մայրաքաղաքում ստեղծել պետության կողմից ֆինանսավորվող աջակցության կենտրոններ

բ) Հայաստանի բոլոր մարզերում և մայրաքաղաքում ստեղծել պետության կողմից ֆինանսավորվող աջակցության կենտրոններ

74) Ստորագրել «Կանանց նկատմամբ բռնության և ընտանեկան բռնության կանխարգելման և դրա դեմ պայքարի մասին» ԵԽ կոնվենցիան

75) Իրականացնել վերապատրաստումներ դատավորների, դատախազների, ՀՀ քննչական կոմիտեի և ՀՀ հատուկ քննչական ծառայության քննիչների, փաստաբանների, ոստիկանության աշխատակիցների,

ինչպես նաև սոցիալական աշխատողների համար՝ ընտանեկան բռնության կանխարգելման և ընտանեկան բռնության ենթարկված անձանց պաշտպանության թեմաներով

76) Մշակել «Կանանց, խաղաղության և անվտանգության մասին» ՄԱԿ Անվտանգության խորհրդի N1325 բանաձևի առնչությամբ միջոցառումների ազգային ծրագիր

77) Ստեղծել օրենսդրական կառուցակարգեր ՀՀ Սահմանադրությամբ ամրագրված իրավահավասարության ապահովման համար
78) Ձևավորել ընդհանուր հավասարության ապահովման և խտրականության արգելքի անկախ և արդյունավետ մարմին
79) Մշակել հավասարության ապահովման և խտրականության արգելքի վերաբերյալ ազգային օրենսդրության կիրառման վերաբերյալ ուսումնա-տեղեկատվական նյութեր
80) Վերապատրաստել դատավորներին և փաստաբաններին հավասարության ապահովման և խտրականության արգելքի վերաբերյալ ազգային օրենսդրությունը կիրառելու համար

81) Վերանայել ուսումնամեթոդական նյութերի բովանդակությանը ներկայացվող չափանիշները, որոնք բացառում են խտրականության և անհանդուրժողականության կարծրատիպերի տարածմանը՝ հիմք ընդունելով Տոլեդոյի սկզբունքներն ու ՅՈՒՆԵՍԿՕ-ի «Կրթության բնագավառում խտրականության դեմ» և ՄԱԿ-ի Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների կոնվենցիաների սկզբունքները
82) Մշակել ազգային փոքրամասնություններին պատկանող անձանց իրենց ազգային և էթնիկ ինքնության, ավանդույթների, կրոնի, լեզվի և մշակույթի պահպանման և զարգացման իրավունքի իրականացումը կարգավորող օրենք
83) Ուսումնասիրություն կատարել ազգային փոքրամասնությունների լեզուներով դասավանդող ուսուցիչների, մանկավարժական անձնակազմի և կրթական նոր ծրագրերի կարիքների և հնարավարությունների վերաբերյալ
84) «Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության «Վանաձորի մանկատուն» պետական ոչ առևտրային կազմակերպությունը վերակազմակերպել դժվարին իրավիճակներում հայտնված երեխաներին և ընտանիքներին բազմագործառույթ ծառայություններ տրամադրող աջակցության կենտրոնների
85) ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն համակարգի բնակչության սոցիալական պաշտպանության հաստատությունների (երեխաների խնամքի գիշերօթիկ հաստատություն) վերակազմակերպել երեխայի և ընտանիքի աջակցության կենտրոնների
86) Դասակարգել ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության համակարգի բնակչության սոցիալական

պաշտպանության հաստատություններում (մասնագիտացված մանկատներ) ծառայությունները

87) Իրականացնել բնակչության սոցիալական պաշտպանության հաստատություններում տրամադրվող ծառայությունների համապատասխան աշխատակիցների վերապատրաստման, վերարտակավորման միջոցառումներ

88) Ապահովել առանց ծնողական խնամքի մնացած երեխայի՝ ընտանիքում ապրելու իրավունքը, բարձրացնել հաստատությունների բեռնաթափման և խնամատար ընտանիքների ներդրման գործընթացի արդյունավետությունը

89) Բարելավել որդեգրման գործընթացի կանոնակարգումը,
ապահովել որդեգրման գործընթացի թափանցիկությունը,
ներդնել որդեգրման ենթակա երեխաների անձնական (սահմանափակ) տվյալները, որդեգրել ցանկացող անձանց տրամադրելու մեխանիզմները

90) Ստորագրել ՄԱԿ երեխայի իրավունքների կոնվենցիայի Անձնական հաղորդումների ընթացակարգերի մասին կամընտիր արձանագրությունը

91) Քայլեր ձեռնարկել ծնողների և ուսուցիչների շրջանում ներառական կրթության վերաբերյալ իրազեկվածության բարձրացման ուղղությամբ

92) Ներդնել համընդհանուր ներառական կրթության կազմակերպման արդյունավետ մեխանիզմներ

93) ՀՀ օրենսդրությունը համապատասխանեցնել «Երեխայի միջազգային առևանգման քաղաքացիական մոտեցումների մասին» Հաագայի 1980 թվականի կոնվենցիայի պահանջներին

94) ՀՀ օրենսդրությունը համապատասխանեցնել «Երեխաների պաշտպանության և օտարերկրյա որդեգրման բնագավառում համագործակցության մասին» Հաագայի 1993 թվականի Կոնվենցիայի պահանջներին

95) Իրականացնել Սիրիայի փախստականների կրթական, մշակութային, սոցիալական, տնտեսական ինտեգրման խնդիրների լուծմանը նպաստող ծրագրեր

96) ՀՀ նախարարին կից հասարակական խորհուրդներում քննարկել սույն գործողությունների ծրագրով նախատեսված միջոցառումների կատարման ընթացքը, ինչպես նաև համապատասխան նախարարության կողմից ու իրավունքների պաշտպանությանն ուղղված այլ միջոցառումները

Նման ծավալուն ծրագրի իրականացման արդյունավետությունն անհրաժեշտ է դարձնել խորհրդարանական վերահսկողության առաջնային օբյեկտ, և այդ վերահսկողությունը կարող է լավագույնս իրականացնել նեղ ոլորտային մշտական մասնագիտացած հանձնաժողովը՝ Մարդու իրավունքների հարցերով: Առանց խորհրդարանական վերահսկողության՝ ծրագիրը կկրի առավելապես ֆորմալ բնույթ, հետևապես զուրկ կլինի բովանդակությունից և արդյունավետությունից:

Այսինքն, անհրաժեշտ է ոչ միայն պահպանել, այլ նաև ավելի զարգացնել Մարդու իրավունքների ոլորտային հանձնաժողովը, բարձրացնել դրա դերը թե՛ նախագծերի մշակման, թե՛ խորհրդարանական վերահսկողության մասերով:

Ինչ վերաբերում է 2 այլ հանձնաժողովներ փակելուն, ապա այստեղ առավել նպատակահարմար է ոչ թե փակել, այլ իրար միացնել 2 զույգ փոխկապակցված ոլորտներում աշխատող հանձնաժողովներ: Մեր կողմից մասնավորապես առաջարկվում է միացնել՝

- Առողջապահության, մայրության և մանկության, ինչպես նաև սոցիալական հարցերի մշտական հանձնաժողովները,
- գյուղատնտեսական և բնապահպանական, ինչպես նաև տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման հարցերի մշտական հանձնաժողովները:

Սույն նախագծի ընդունմամբ՝ կշտկվեն նախորդ խորհրդարանի մշտական հանձնաժողովների միջև եղած անհամապատասխանությունները, ինչպես նաև խորհրդարանում օրենսդրական աշխատանքի բեռը կբաշխվի համամասնորեն գործող բոլոր մշտական հանձնաժողովների միջև: